

Ուսուցիչների մասնագիտական դեֆորմացիայի պատճառները և կապը նյարդային համակարգի տիպաբանական հատկությունների հետ

*Միրզոյան Վանանե
Մալումյան Տաթևիկ
Միքայելյան Մադլեն*

Հանգուցային բառեր. մասնագիտական գործունեություն, զգայունություն, հուզական ռեակտիվություն, առույգություն, շարժունություն

Նախաբան

Մարդու համար կարևոր նշանակություն ունի և անձի զարգացման գործում մեծ դեր է խաղում աշխատանքային և մասնագիտական գործունեությունը: Անձի մասնագիտական գործունեության արդյունավետ իրականացման վրա մեծ ազդեցություն են ունենում ինչպես միջավայրը, այնպես էլ անձի անհատական-տիպաբանական առանձնահատկությունները:

Հոդվածում ներկայացված է մասնագիտական գործունեության դրական և բացասական ազդեցությունը՝ ինչպես անձի կողմից իրականացվող մասնագիտական գործունեության արդյունավետ իրականացման վրա, այնպես էլ՝ անձնային աճի: Մանրամասն ներկայացվել են «մասնագիտական դեֆորմացիա» եզրույթը, դրա առաջացման պատճառները, դրսևորումները, հետևանքները անձի մասնագիտական գործունեության վրա:

Իրականացվել է հետազոտություն, որի նպատակն է եղել բացահայտել մասնագիտական դեֆորմացիայի կապը նյարդային համակարգի տիպաբանական հատկությունների հետ: Մեր առջև դրված է եղել մի քանի խնդիր. բացահայտել ուսուցիչների մոտ մասնագիտական դեֆորմացիայի առկայությունը և աստիճանը, բացահայտել վերջիններիս նյարդային համակարգի տիպաբանական հատկությունները և որոշել, թե որ անձնային հատկանիշների հետ է առավել փոխկապված մասնագիտական դեֆորմացիան:

Հետազոտության ժամանակ կիրառվել են «Մանկավարժների մասնագիտական դեֆորմացիա» մեթոդիկական և «Նյարդային համակարգի տիպաբանական հատկությունների կենսական դրսևորումների» հարցաբանը: Հետազոտության արդյունքում բացահայտեցինք մասնագիտական դեֆորմացիայի և նյարդային համակարգի տիպաբանական հատկու-

թյունների միջև փոխկապվածության առկայությունը:

Հողվածում ներկայացված են նաև գործնական առաջարկություններ, որոնք կօգնեն կանխարգելելու մասնագիտական դեֆորմացիայի առաջացումը ուսուցիչների մոտ:

Հողվածի բովանդակությունը

Արտաքննապես մարդը կարող է հաջողակ երևալ, սակայն իրեն զգալ ոչ ներդաշնակ, հոգնած, հակասական զգացում ունենա բավարարվածության և անբավարարվածության միջև: Հաջողություն ունենալու դեպքում անձը այն չի գնահատում, չի կարևորում և համարում է անխմաստ: Այս խնդիրն առաջանում է անձի մասնագիտական դեֆորմացիայի ժամանակ:

Առաջին անգամ «մասնագիտական դեֆորմացիա» եզրույթը ներմուծել է Պիտիբիմ Սորոկինը: Այն բնութագրվել է որպես անձի վրա մասնագիտական գործունեության բացասական ազդեցություն [7]:

Սոցիոլոգ Պ. Ա. Սորոկինը իր «Սոցիոլոգիայի հանրամատչելի դասագիրք» աշխատության մեջ այն կիրառել է որպես մարդու մասնագիտական գործունեության վրա բացասաբար անդրադարձող բնութագիր [5]: Արտասահմանյան գրականության մեջ «Professional deformation» եզրույթն առաջին անգամ կիրառել է Հ. Լանդերոկը «Պրոֆեսիոնալիզմ. մասնագիտական դեֆորմացիայի հետազոտություն» հողվածում և տվել հետևյալ բնութագիրը. «Մասնագիտական հմտությունների տևական կիրառումը մարդու մոտ առաջ է բերում մտածողության գործընթացների և խմբի համար սեփական կարևորության առողջ գնահատականի դեֆորմացիա» [6]:

Մասնագիտական դեֆորմացիան անձի մասնագիտական գործունեության ընթացքում ձևավորված սուբյեկտիվ որակների ազդեցության գործընթացն ու արդյունքն է նրա անձնային հատկությունների, անհատականության վրա [1]:

Յուրաքանչյուր մասնագիտություն կարող է առաջացնել մասնագիտական դեֆորմացիա, սակայն Ս.Պ. Բեզնոսովի, Լ.Ն. Կորնեևի, Ա. Մ. Մարկովի և այլոց կարծիքով առավել շատ մասնագիտական դեֆորմացիայի ենթարկվում են այն մասնագիտությունների տեր մարդիկ, որոնց աշխատանքը կապված է մարդկանց հետ. բժիշկներ, մանկավարժներ, սպասարկման ոլորտի աշխատողներ, ձեռնարկատերեր և այլն [4]:

Անձի մոտ մասնագիտական դեֆորմացիան դրսևորվում է բացասական հուզական ապրումներով և ճգնաժամով: Ըստ էության այն անխու-

սափելի է, եթե գործ ենք ունենում արհեստավարժ մասնագետի հետ: Թեպետ հնարավոր է խուսափել դրանից, եթե անձը գիտի դեֆորմացիայի առաջացման պատճառներն ու դրա կանխարգելման ուղիները:

Ցանկացած մասնագիտության տեր անձի վրա մասնագիտական դեֆորմացիան կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Մասնագիտական գործունեության դրական և բացասական հետևանքները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 1

Մասնագիտական գործունեության հետևանքները անձի վրա

	Դրական ազդեցություն (անձնային աճ)	Բացասական ազդեցություն (մասնագիտական դեֆորմացիա)
1.	Մեփական անձի առավել խորը գիտակցումը, այլոց և իրադարձությունների հասկացումը	Մեփական անձի և այլոց նկատմամբ բացասականի պրոեկտումը
2.	Կենսական իրադրությունների վերլուծությունը	Մեփական անձի և այլոց պիտակավորումը
3.	Ռեֆլեքսիայի ընդունակությունը	Այլոց խորհրդատվության իրականացումը
4.	Ճգնաժամային և տրավմատիկ իրավիճակների արդյունավետ հաղթահարման հմտությունների ձևավորումը	«Ուսուցչի» դերի ստանձնումը
5.	Հաղորդակցման հմտությունների ձևավորումը	Չափազանց ինքնավերահսկողությունը, հիպերռեֆլեքսիան, ինքնաբուխության կորուստը
6.	Այլոց կարծիքին դիմակայումը	Կայչուն մտքերը
7.	Ինքնակարգավորումը	Կենսափորձի նկատմամբ զգայունության կորուստը, ռացիոնալիզացիան, կարծրատիպացումը
8.	Ապրումակցման ընդունակությունը	Հաղորդակցման հազեցվածությունը
9.	Հանդուրժողակնությունը, լայնախոհությունը	Հուզական սառնությունը
10.	Ճանաչողական հետաքրքրությունը	Ցինիզմը
11.	Ինքնիրացման նոր ձևերի դրսևորումը	

Մասնագիտական դեֆորմացիան դրսևորվում է գործունեության իրականացման ժամանակ սխալներով, կարգապահական, բարոյական, իրավական խախտումներով, հանցագործությամբ, չարաշահումներով: Փոփոխություններ են դրսևորվում վարքի, խոսքի մեջ, հաղորդակցման ժամանակ: Նույնիսկ այն դեպքում, երբ մարդը դադարում է իրականացնել այդ գործունեությունը, դեֆորմացիան ինքնուրույն չի անցնում:

Է. Ֆ. Ջեերը առանձնացնում է մասնագիտական դեֆորմացիայի երեք խումբ գործոններ [2].

1. օբյեկտիվ գործոններ՝ մասնագիտական միջավայրը, հասարակության սոցիալ-տնտեսական վիճակը,
2. սուբյեկտիվ գործոններ՝ անձի անհատական-հոգեբանական առանձնահատկությունները, որոնցով պայմանավորված է կարծրատիպերի արագ ձևավորումը,
3. օբյեկտիվ-սուբյեկտիվ գործոններ. պայմանավորված են արտադրական գործընթացի համակարգով և կազմակերպմամբ:

Անձի մասնագիտական դեֆորմացիան ենթադրում է անձնային որակների, ընկալման կարծրատիպերի, արժեքային կողմնորոշումների, բնավորության, հաղորդակցման և վարքի ձևերի փոփոխություն, որն առաջանում է երկարատև մասնագիտական գործունեություն իրականացնելու արդյունքում:


Դեֆորմացիայի առաջացման վրա մեծ ազդեցություն է ունենում ինտելեկտի անկումը: Ըստ հետազոտական տվյալների՝ մեծահասակների ընդհանուր ինտելեկտը նվազում է աշխատանքային փորձի աճին գուցընթաց: Իհարկե, նշանակություն ունեն տարիքային փոփոխությունները, սակայն կարևոր պատճառը մասնագիտական գործունեության առանձնահատկություններն են [4]:

Մասնագիտական դեֆորմացիա առաջացնող հոգեբանական պատճառներից կարելի է նշել անձի հոգեբանական տիպը, նրա դրդապատճառները, հետաքրքրությունները, այնպիսի որակները, ինչպիսիք են հուզական անկայունությունը, թուլակամությունը, դյուրագրգիռությունը, թույլ վերահսկողությունը, անտարբերությունը մարդկանց հանդեպ, հոգնածությունը, հուզական ծանրաբեռնվածությունը:

Հետազոտության մեթոդները, փորձարարական վերլուծությունը և արդյունքները

Ենթադրվում է, որ մասնագիտական դեֆորմացիայի առաջացումը պայմանավորված է նաև անձի նյարդային համակարգի տիպաբանական հատկություններով: Որպեսզի բացահայտենք մասնագիտական դեֆորմացիայի և նյարդային համակարգի տիպաբանական հատկությունների միջև կապը, իրականացրել ենք հետազոտություն: Հետազոտությանը մասնակցել են 126 ուսուցիչ, որոնց հետ կիրառվել են «Մանկավարժների մասնագիտական դեֆորմացիա» մեթոդիկան [3] և «Նյարդային համակարգի տիպաբանական հատկությունների կենսական դրսևորումների» հարցարանը [8]:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ մասնագիտական դեֆորմացիան հարցվածների 83 %-ի մոտ թույլ է արտահայտված, 14 %-ի մոտ՝ միջին չափով, իսկ 3 %-ի մոտ ուժեղ է արտահայտված:



Գծապատկեր 1. Մասնագիտական դեֆորմացիայի ցուցանիշները ուսուցիչների մոտ

Մանկավարժների մասնագիտական դեֆորմացիայի և նյարդային համակարգի տիպաբանական հատկությունների փոխկապակցվածությունն ուսումնասիրելու նպատակով կատարել ենք տվյալների վիճակագրական վերլուծություն՝ Պիրսոնի գծային կորելյացիայի մեթոդով:

Նշանակալի դրական համահարաբերակցական կապ է գրանցվել մասնագիտական դեֆորմացիայի և զգայունության ($r= 0,539$) ($P\leq 0,05$),

հուզական ռեակտիվության ($r= 0,578$) ($P \leq 0.05$), առույգության ($r=0,319$) ($P \leq 0.05$) ցուցանիշների միջև, այսինքն՝ մասնագիտական դեֆորմացիայի ցուցանիշը բարձրանում է զգայունության, հուզական ռեակտիվության, առույգության ցուցանիշների աճին զուգահեռ:

Նշանակալի բացասական համահարաբերակցական կապ է գրանցվել մասնագիտական դեֆորմացիայի և նյարդային գործընթացների շարժունության ցուցանիշների միջև ($r=- 0,302$) ($P \leq 0.05$), այսինքն՝ որքան ավելի ցածր է արտահայտված նյարդային գործընթացների շարժունությունը, այնքան ավելի բարձր է մասնագիտական դեֆորմացիայի ցուցանիշը մանկավարժի մոտ:

Աղյուսակ 2

Մասնագիտական դեֆորմացիայի և նյարդային համակարգի հատկությունների դրսևորումների համահարաբերակցական կապի արդյունքները

	Մասնագիտական դեֆորմացիա
Զգայունություն	0.539*
Հուզական ռեակտիվություն	0.578*
Նյարդային գործընթացների շարժունություն	-0.302*
Արգելակման գործընթացի ուժը	-0.172
Առույգություն	0.319*
Դիմացկունությունը երկարատև ծանրաբեռնվածության նկատմամբ	-0.119
Դիմացկունությունն ինտենսիվ ծանրաբեռնվածության նկատմամբ	-0.228

* $P \leq 0.05$

Եզրակացություն

Այսպիսով, մասնագիտական դեֆորմացիայի և նյարդային համակարգի հետևյալ հատկությունների՝ զգայունության, հուզական ռեակտիվության, առույգության միջև կա ուղիղ կապ, իսկ նյարդային գործընթացների շարժունության, արգելակման գործընթացի ուժի միջև՝ հակադարձ կապ: Այս ամենը մեզ թույլ է տալիս եզրակացնել, թե ում մոտ կարող է առաջանալ մասնագիտական դեֆորմացիան, և ինչպես կարելի է կանխարգելել դրա առաջացումը: Այսինքն՝ զգայուն և հուզական մարդկանց մոտ մասնագիտական դեֆորմացման հավանականությունը ավելի մեծ է: Ուսուցիչների մոտ մասնագիտական դեֆորմացիան կանխարգելելու և վերացնելու նպատակով առաջարկվում է.

- բարձրացնել սթրեսակայունության մակարդակը,
- բարձրացնել սեփական աշխատանքով բավարարվածության աստիճանը,
- սովորեցնել հասկանալ և կառավարել սեփական հուզական վիճակները,
- սովորեցնել կառավարել ժամանակը,
- զարգացնել հաղորդակցական հմտությունները և ապահովել հուզական շփումը,
- զբաղվել յոգայով, սպորտով,
- բավարար ժամանակ տրամադրել քնին, զրոսանքին, հանգստին:

Գրականություն

1. Безносов С.П. Профессиональная деформация личности.- СПб.: Речь, 2004, с 9.
2. Зеер Э. Ф. 347 Психология профессий: Учебное пособие для студентов вузов. – 2-е изд., перераб., доп. – М.: Академический Проект; Екатеринбург: Деловая книга, 2003. – 336 с. – («Gaudeamus»).
3. Ильин Е.П. Психология помощи. Альтруизм, эгоизм, эмпатия. Изд-во Питер, 2013, 304с. С. 227-228.
4. Профессиональная деформация личности. Учебное пособие. (Составители А.В. Коваленко, Л.А. Шиканов). – Томск: Изд-во ТПУ, - 2009. - 90 с.
5. Сорокин П.А. Общедоступный учебник социологии. Статьи разных лет / Ин-т социологии. - М.: Наука, 1994. - 560 с. - (Социологическое наследие). - ISBN 5-02-013464-3 (в пер.).
6. Langerock H. Professionalism: A Study in Professional Deformation // American Journal of Sociology. Vol. 21, No. 1 (Jul., 1915), pp. 30–44. doi: 10.1086/212465.
7. <https://infopedia.su/4x10ff.html>
8. <https://pandia.ru/text/80/220/19738.php>

Причины возникновения профессиональной деформации, и ее связь с типологическими особенностями нервной системы

*Мирзоян Ванане
Малумян Татевик
Микаелян Мадлен*

Резюме

Ключевые слова: профессиональная деятельность, чувствительность, эмоциональная реактивность, энергичность, подвижность

В жизни человека большую роль играет осуществление трудовой и профессиональной деятельности. На профессиональную деятельность человека большое влияние оказывает как окружающая среда, так и индивидуально-типологические особенности человека.

В статье представлено положительное и отрицательное влияние, как на эффективное выполнение профессиональной деятельности, так и на личностный рост человека. Подробно дана характеристика термина «профессиональная деформация», представлены причины ее возникновения, проявления и влияние на человека.

С целью выявления связи между профессиональной деформацией и типологическими свойствами нервной системы было проведено исследование. Перед нами было поставлено несколько задач: выявить наличие и степень профессиональной деформации у педагогов, определить типологические свойства их нервной системы и ее связь с профессиональной деформацией. В качестве методик были выбраны «Профессиональная деформация педагогов» и опросник «Жизненные проявления типологических свойств нервной системы». Результаты исследования выявили связь между типологическими свойствами нервной системы и профессиональной деформацией.

В статье представлены также практические рекомендации по профилактике профессиональной деформации у педагогов.

Causes of Professional Deformation and its Correlation with the Typological Features of the Nervous System

Mirzoyan Vanane
Malumyan Tatevik
Mikayelyan Madlen

Summary

Key words: *professional activity, sensitivity, emotional reactivity, energy, mobility*

In human life, the implementation of labor and professional activities plays an important role. Both the environment and individual-typological features of an individual greatly influence one's professional activity.

The article reveals positive and negative impact of professional activity on the effective implementation of professional activity and one's personal growth. The term professional deformation, its causes, manifestations, consequences were presented in detail.

A study was conducted to identify the connection between professional deformation and typological properties of the nervous system. We have the following duties: firstly, we must identify the presence and degree of teachers' professional deformation, secondly, we must identify typological properties of their nervous system and determine the properties associated with professional deformation.

During the research, "Teachers' Professional Deformation" methodology and "Vital Manifestations of the Typological Properties of the Nervous System" questionnaire were used.

The results of the study clearly revealed the link between professional deformation and typological properties of the nervous system.

The article also demonstrates practical recommendations for the prevention of professional deformation among teachers.

Ներկայացվել է 18.09.2022 թ.

Գրախոսվել է 24.09.2022 թ.

Ընդունվել է տպագրության 25.11.2022 թ.